ունելով իրաւունս գրելոյ) գրուացքն իմ և ակն ունիմ ի ձենջ, զի կալով մնասցուք դուք ի վերայ խոստմանց ձերոց, որ առ մեզ, և արասցուք սովորութիւն ձեզ գրել մեզ մերոց որոք թուէն գրեանքն ի ձեռս ձեր հասանիլն։

ի Մադրաս նոյեմբերի 30 Յրամանոց խոնարհ և հաւատի բարեկամ

յամի տեառն փրկչին մերոյ 1795 Շամիր աղա

ՄՄ, արխիվ Կյուրեղ Սրապյանի, թղթ. 81ա, վավ. 9, թերթ՝ 2, բնագիր։

№ 3

Հերակլ II-ի հրովարտակը Շ. Շահամիրյանին

Ողորմութեամբ աստուծոյ մենք Յեսեյան, Դավիթեան, Սողոմոնեան, Բագրատունեան երանելի Թեյմուրազ թագավորի որդի Հերակլ Երկրորդ, թագավոր Քարթլիի, Կախեթի և այլոց և այլոց, վերանորոգեցինք նորին պայծառափայլութիւն մեր որդի և մեր թագավորության գահաժառանգ Գիորգիի շնորհատվությունը, որ կատարել էր նա նորջուղայեցի իշխան Շահ[ա]միր Սուլթանումին, այն է՝ իր սեփական տիրույթ լոռե քաղաքն իր ողջ ձորահովիտներով, որ է Գուգարաց աշխարհը, ստորագրված և կնքված իր հրովարտակով մարմնանալու բանին աստուծոյ 1790 թվականի նոյեմբեր ամսի 16-ին։ Մենք, այնուհետև, ի հավելումն հաստատեցինք, որ այն լոռե քաղաքը լինի ոչ միայն տեր Շահմիր Սուլթանումի տիրույթը, այլև [որպես այդպիսին] մնալով անցնի նրան ժառանգաբար՝ սերնդից սերունդ, մինչև ավարտն աշխարհի։ Վերացրինք ուստի ամեն տեսակի հարկ, մաքս ու հատուցումն արքունական և թե իշխանական ու ընդհանրապես հարկատու ժողովրդի և այլն, որպեսզի ոչ ոք իրավասու չլինի վերցնելու լոռե քաղաքի և ոչ էլ նրա ձորահովտի ոչ մի արդյունքը իշխան Շահմիր Սուլթանումից ու նրա ժառանգներից։

Եվ եթե նրանց մեջ գտնվի մահապարտ մեղավոր մեկը և կամ ոսկու կամ արծաթի և այլի պարտապան ոմն, ով էլ լինի՝ միայն նրա անձը թող պատժվի և պարտապանի այն ինչքը, որը կգտնվի այդ ժամանակ, այն վճարվի պարտապաններից, իսկ պարտապանի մահվանից հետո նրա որդիները լոռե ձորահովտին տիրեն անպարտ որևէ մեկին։

Եւ այդպես, նաև ոչ ժառանգները, ոչ էլ ազգականները և տոհմակիցները իրավասու չեն վաճառելու և նվիրելու որևէ մեկին այդ հողից ոչ մի ոտնաչափ, այլ միայն տնօրինելու նրա արդյունքը իրենց կենդանության ժամանակ։

Եվ մենք, ի հաստատումն մեր այս խոսքերի, սեփական ձեռքով ստորագրեցինք և մեր թագավորական կնիքով կնքեցինք։ Գրվեց այս գիրը մեր փեշքաշ նիվիսի, մդիվան Սուլխան Թումանովի որդու՝ Շիոշի, ձեռքով 1797 թվականի նոյեմբերի 20-ին, իսկ վրացական քրոնիկոնի չորս հարյուր ութսուն հինգին։

(ութանկյուն կնիք)

ՄՄ, Նոր փաստաթղթեր, թղթ. 1, վավ. 12։

№ 4

Գեորգի XII թագավորի նամակը Հովհաննես Շահամիրյանին

Պայծառ իշխան Յոհաննէս Աղայ ի մէջ պատուով յիշելի

Լուր օրհասի պայծառ հօրն ձերոյ և մեր հաւատարիմ բարեկամի բաղխեաց զունկս մեր և մեզ, ըստ բարեկամական օրինի, ցաւելով ափսոսեցաք զնա, տալով զարժանաւորն զողորմին, հայցելով ի տեառնէ վասն հոգւոյ նորին զհանգիստ յաւիտենից և սակս մնացորդացդ և սիրելեացդ մերոց զմխի-